

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2013-2-3-Ա

ք. Երևան

28.06.2013թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2013 թվականի հունիսի 25-ի նիստում քննարկեց 2012 թվականի ապրիլի 28-ին արտոնագրային հավատարմատար Անգելինա Նահապետյանի կողմից ներկայացված՝ ՕԱՕ «Կոմպանիյա ՅՈՒՆԻՄԻԼՔ» ընկերության (այսուհետ՝ բողոքարկող) «Тема» (հայտ N20110302_1) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 87-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված «Тема» ապրանքային նշանը չի կարող գրանցվել 5-րդ դասի ապրանքների համար, քանի որ այն շփոթելու աստիճան նման է միջազգային գրանցման հիման վրա ՀՀ տարածքում պահպանվող "ТЕМА" (FICOSOTA SYNTEZ OOD, Madara Blvd. 48, BG-9701 SHUMEN (BG), IR670442) ապրանքային նշանին:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը ամբողջությամբ բավարարելու և կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու վերաբերյալ, քանի որ «Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը» 26.04.2013թ. կայացրել է վճիռ «Ֆիքոսոթա Սինթեզ» ՕՕԴ

ընկերության «TEMA» ապրանքային նշանի (IR670442) միջազգային գրանցումը մասնակիորեն՝ ՀՀ տարածքում նշված 5-րդ դասի ապրանքների նկատմամբ, չեղյալ հայտարարել:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել արտոնագրային հավատարմատար Անգելինա Նահապետյանի կողմից ներկայացված «Tema» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը, կրկնական փորձաքննության որոշումը ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանի վկայագիր տալ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

Բողոքարկման խորհրդի նախագահ

Գ. Մելքոնյան